


ԽՍՀՄ ՆԳԺԿ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ
ԲԱԺՆԻ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

№ 1



ՄԱՍԿՎԱ—1938 թ.

ԽՍՀՄ ՆԳԺԿ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԲԱԺՆԻ

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

№ 1

ԲԱԺԻՆ 1

ԽՍՀՄ ՆԳԺԿ-Ի ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ № 175

ԽՍՀՄ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ
1938 թ., 5-ը սեպտեմբերի

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԳԺԿ ՅԵՐԿՐԱՑԻՆ ՅԵՎ ՄԱՐԶԱՑԻՆ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Մի քանի ՁԱԳՍ-երի աշխատակիցների կողմից դեպի աշխատավորության պահանջներն ունեցած ֆաշիզուկի և բյուրոկրատական վերաբերմունքի դեպքերը համախառն դառնալու մասին:

Վերջերս հաճախակի յեն դարձել բողոքները՝ դեպի քաղաքացիների գիմումները (վորոնք դիմում են ՁԱԳՍ պահանջվող փաստաթղթերը ստանալու համար) շատ ՁԱԳՍ-երի աշխատակիցների կողմից ցուցաբերվող քաջջուկի և անհողի վերաբերմունքի դեպքերի առթիվ:

Դիմումների և բողոքների մեջ արտահայտում են արդարացի անբավականությունն այն մասին, վոր ակտերի դրքերով վկայական ստանալու համար, խնդրատուները հաճախ բազմաթիվ անգամ գնում են ՁԱԳՍ, ամիսներով չարչարվում են պետք յեղած փաստաթուղթը քա-

СПРАВОЧНИК

Отдела актов гражданского состояния НКВД СССР
Арм Гиз ССР, Ереван, 1939 г.

տանալու համար: Առավել դժվար է վկայական ստանալ ուրիշ քաղաքից կամ չրջկենտրոնից:

Այսպիսի դեպքերում խնդրատուների բազմիցս նամակներին ՉԱԳՍ-երը ուղղակի չեն պատասխանում:

Այդ բողոքների ստուգման ու հետազոտութան ընթացքում պարզվել է, Վոր նրանց մեծամասնությունը միանգամայն արդարացի չեն և հետեվանք են ՉԱԳՍ-երի աշխատակիցների կողմից դեպի իրենց պարտականություններն ունեցած խայտառակ վերաբերմունքի:

Հակառակ մեր բոլոր պահանջներին և զգուշացումներին դեպի խորհրդային քաղաքացիների կարիքները հողատար և ուշադիր վերաբերմունք ցույց տալու անհրաժեշտություն մասին, ՉԱԳՍ-ի աշխատակիցները դեպի այդ կարիքները մնում են խուլ և անտարբեր:

Ակտերի գրքերով տեղեկանք տալու խայտառակ քաջջուկի բնորոշ դեպք է տեղի ունեցել Սմոլենսկի մարզի Սուխինիչեսկի ՉԱԳՍ-ի չրջբյուրոյում:

ԽՍՀՄ ՆԳժԿ-ՔԿԱ Բաժնում ստացվել է Մոսկվայում ապրող քաղ. Յուդիևայի բողոքը Սուխինիչեսկի ՉԱԳՍ-ի չրջնաային բյուրոյի աշխատակիցների կողմից տեղի ունեցած քաջջուկի մասին, վորտեղից նա 7 ամսվա ընթացքում չի կարողացել յերեխաների ծընընդյան վկայականներն ստանալ: Նրա բոլոր փորձերը նշված վկայականներն իր քրոջ միջոցով ստանալու, վորն ապրում է Սուխինիչից 13 կիլոմետրի վրա և վորը մի քանի անգամ այդ վկայականների համար դնացել է ՉԱԳՍ, ինչպես նաև Մոսկվայից հատկապես այնտեղ մեկնած Յուդիևայի տղայի միջոցով անցել է ապարդյուն: Միայն չնորհիվ Մոսկվայի ՉԱԳՍ-ի Հոկտեմբերյան ռայբյուրոյի միջամտության և վերջինիս յերիցս պահանջի, Սուխինիչեսկի ՉԱԳՍ-ի չրջբյուրոն վերջապես ուղարկել է ծնընդյան վկայականները:

ԽՍՀՄ ՆԳժԿ-ՔԿԱԲ կողմից այդ բողոքի առթիվ կատարված հետազոտությունում Սուխինիչեսկի ՉԱԳՍ-ի չրջբյուրոյի աշխատակիցները— հրահանգիչ Յեզորովայի և դործավար Անտոնովայի կողմից տեղիք տված քաջջուկի փաստը հաստատվել է: Հաստատված է նաև այն, վոր քաջջուկի այդ փաստը յեղակի դեպք չէ: ԽՍՀՄ ՆԳժԿ ՔԿԱԲ աշխատակիցը Սուխինիչեսկի ՉԱԳՍ-ում գտնվելու ժամանակ այստեղ ներկայացել է տասնվեց տարեկան Շպանցեվան, վորը յեկել է Յարուսլավլ քաղաքից վկայական ստանալու: Շպանցեվայի հայտարարությունից յերևում է, վոր նա հարկադրված է յեղել վկայականի հա-

Հաստատված է
Մոսկվա

11-2840498

մար Սուխինիչի գալ, քանի վոր վկայականն ուղարկելու մասին նրա կողմից արած դրավոր հարցումներին վոչ մի պատասխան չի ստացվել:

Այդ առթիվ սկսած 1937 թ. նոյեմբերի 15-ից մինչև 1938 թ. հուլիսի 28-ը ՉԱԳՍ-ի Յարուսլավլի բյուրոն հարցումներ է ուղարկել ինչպես Սմոլենսկի մարզի ՔԿԱԲ և Սուխինիչեսկի ՉԱԳՍ-ի բյուրոն (այդ գրությունները հայտնաբերվել են Սուխինիչեսկի ՉԱԳՍ-ում), բայց վոչ մի արդյունք չի տվել, Սուխինիչեսկի ՉԱԳՍ-ի բյուրոն վկայականը չի ուղարկել մինչև իր՝ Շպանցեվայի գալը:

ԽՍՀՄ ՆԳժԿ-ի հրահանգը կոպիտ խախտելու և բյուրոկրատիզմի նշված փաստերը բավարար չափով ապացուցում են Սմոլենսկի մարզի քաղ. կացության Ակտերի Բաժնի պետ ընկ. Լադերսոնի վերաբերյալ և կոնկրետ ղեկավարութայան բացակայությունը ստորին ուղակների վրա:

Չափադանց հատկանշական է 1937 թ. դեկտեմբերին նրանց կողմից Սուխինիչեսկի չրջբյուրոյի աշխատանքը ստուգելու համար ՉԱԳՍ-ի աշխատանքի հետ քիչ ծանոթ հրահանգիչ Պախոմովի դործուղումը, վորը ՉԱԳՍ-ի բյուրոյի աշխատակիցներին տվել է անիմաստ և սխալ, հրահանգին բացահայտ հակասող ցուցմունքներ:

Չնայած վոր Սուխինիչը մարզի ՔԿԱ Բաժնից գտնվում է յերկաթուղով մի քանի ժամվա հեռավորության վրա, հրահանգիչ Պախոմովի ստուգումից հետո անցած ութ ամսվա ժամանակամիջոցում, քաղ. կացության ակտերի Բաժնի պետ ընկ. Լադերսոնը չնայած այդ ՉԱԳՍ-ի անբավարար վիճակի մասին յեղած ահազանդումներին (Յարուսլավլի քաղ. ՉԱԳՍ-ի նամակը Շպանցեվայի դործի վերաբերյալ) նրա աշխատանքը վոչ մի անգամ ստուգման չի յենթարկել:

Սուխինիչեսկի ՉԱԳՍ-ի աշխատանքների ավելի հաճախակի բուտուգման անհրաժեշտությունը նաև թելադրվում էր նրանով, վոր ինչպես հայտնաբերվել է ԽՍՀՄ ՆԳժԿ ՔԿԱԲ հետազոտորդի կողմից՝ այդ բյուրոյի ՉԱԳՍ-ի վողջ աշխատանքը գտնվել է խտուն վիճակում, ինչպես որինակ՝ ակտերի գրքերը լրացվել են անխնամ, բացակայել է ՉԱԳՍ-ի փաստաթղթերի հաշվառումը, արխիվը թափթփված է, գտնվել է տանիքում հատակի վրա թափված փոշոտ և քրքրված վիճակում, բազմազավակների գործերը ձևակերպվել են կոպիտ թերություններով:

ՆԳժԿ-ի Սմոլենսկի մարզի վարչության ՔԿԱԲ կողմից ՉԱԳՍ-երի նկատմամբ տարվող պատահական ղեկավարությունը հասցրել է այն

բանին, վոր Սուխինիչեսկի ՁԱԳՄ-ը կուտուրական հիմնարկության փոխարեն դարձել է մի հիմնարկություն, վորը բացահայտորեն չի համապատասխանում ՁԱԳՄ-երի առաջ դրված խնդիրներին:

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Բոլոր հանրապետությունների, յերկրային և մարդային ՆԳԺԿ և ՆԳԺԿ վարչությունների ԲԿԱԲ պետերին՝ ստուգել (առաջին հերթին այն ՁԱԳՄ-երը, վորոնք քաղաքակրթական բողոքներ են ստացված) բոլոր ՁԱԳՄ-երի քաղաքային և շրջանային բյուրոների կողմից քաղաքացիների, ուրիշ քաղաքների և շրջանների հարցումների կատարումը փաստաթղթեր ուղարկելու մասին: Բոլոր հայտնաբերված քաղաքակրթական և բյուրոկրատիզմի դեպքերի առթիվ, մեղավորներին յենթարկել խիստ տուժի, ընդհուպ մինչև դատի տալը:

2. ՆԳԺԿ-ի Սմոլենսկի մարզի վարչության ԲԿԱԲ պետ՝ պետական անվտանգության ավագ լեյտենանտ ընկ. Լադերոսնին Սուխինիչեսկի ՁԱԳՄ-ի շրջբյուրոյի աշխատանքների վրա հարկ յեղած հսկողություն չունենալու և ՁԱԳՄ-ի աշխատանքը հեղադրուելու համար ՁԱԳՄ-ի հրահանգների հետ բոլորովին անձանոթ աշխատակից գործուղելու համար՝ անել նկատողություն:

3. ՆԳԺԿ-ի Սմոլենսկի մարզային վարչության պետ՝ պետանվտանգության կապիտան ընկ. Չազուլինին՝ Սուխինիչեսկի ՁԱԳՄ-ի շրջբյուրոյի այն աշխատակիցներին, վորոնք ՁԱԳՄ-ի փաստաթղթեր տալու գործում տեղի յեն տվել քաղաքակրթական, յենթարկել խիստ տուժի:

4. Չգուշացնել ՁԱԳՄ-ի բոլոր աշխատակիցներին, վոր դեպի խորհրդային Միության աշխատավորությանը, վորոնք դիմում են ՁԱԳՄ-երին այս կամ այն փաստաթղթերի և պարզաբանումների համար, վոր հողատար և անուշադիր վերաբերմունքի համար մեղավորները կյենթարկվեն ամենախիստ պատասխանատվության:

Այս շրջաբերականը հայտարարել ԲԿԱԲ և ՁԱԳՄ-ի շրջանային բյուրոների աշխատակիցներին:

ԽՍՀՄ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ ՏԵՂԱԿԱՆ, ԴԻՎ. ՀՐԱՄԱՆԱՏԱՐ՝ ՉԵՐՆՈՇՈՎ

ԲԱԺԻՆ 2

ԽՍՀՄ ՆԳԺԿԲԿԱԲ ԴԻՐԵԿՏԻՎԱՆԵՐԸ

ԲՈՂՈՐ ՔԿԱԲ ՊԵՏԵՐԻՆ

26 ոգոստոսի, 1938 թ.
№ 1495754

Մի քանի անգամ պահանջվող կրկնակի վկայականների վրա պարտադիր կարգով նշում կատարելը այն մասին թե, վոր հիմնարկաբանը պիտի ներկայացվի այն:

Այն հարցի մասին թե պետք է արդյոք սահմանափակում կատարվի կրկնակի վկայականներ տալու ժամանակ, յեթե համեմատաբար կարճ ժամանակամիջոցում արդեն ստացվել է 2-3 և ավելի կրկնակի վկայականներ՝ հայտնվում է՝

Համաձայն հրահանգի 197 հոդ. ծանոթություն կրկնակի վկայականներ տալու բոլոր դեպքերում (առանց պետուրքի դանձման) վկայականի վերին աջ անկյունում կատարվում է նշում՝ «Այսինչ հիմնարկություն ներկայացնելու համար»:

Այս դեպքերում ՁԱԳՄ-ի աշխատակիցների կողմից այդ պահանջը խստիվ կատարելու պայմաններում, վոր մի փորձանք չի լինի, յեթե վորեւե մեկն ավելորդ անգամ կրկնակի վկայական ստանա, քանի վոր նշում կատարված լինելու դեպքում, նշված հիմնարկությունից բացի, վորեւե այլ հիմնարկություն վկայականը չի ընդունի:

Ինչ վերաբերում է այն դեպքերին, յերբ վկայականը պահանջվում է 197 հոդ. չնշված վորեւե նպատակի համար, այդ դեպքում յեթե կարճ ժամանակամիջոցում վկայականը պահանջվել է 3-4 անգամ, ՁԱԳՄ-ի աշխատակիցը պարտավոր է խնդրատուի հետ զրույց ունե-

նալու միջոցով պարզել, թե ինչ նպատակի համար և պահանջվում վկայականը և ինչու կարճ ժամանակամիջոցում կրկնվում և պահանջը: Յեթե խնդրատուին վկայականն անհրաժեշտ և անցազիր ստանալու համար, այդ դեպքերում վկայականի վերին մասում պետք և կատարել հետևյալ նշումը՝ «այսքան ժամանակամիջոցում այս վկայականը պահանջվել և յերրորդ, չորրորդ և այլն անգամ»:

Ընդհանրապես, վորպես կանոն ընդունել, վոր յեթե տվյալ վկայականի պահանջը կրկնվել է 3-4 անգամ (ի հարկե պայմանով, վոր խնդրատուն իրավունք ունի տվյալ վկայականը ստանալու իր համար, տղայի համար, և այլն) պարտազիր կարգով կատարել նշում՝ «ինչ նպատակի համար և ստացվում վկայականը»:

ԳԱՂԱԲԱՅԻԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԲԱԺԻՆ

ԳԱՂԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՐ ՊԵՏԵՐԻՆ

19 ոգոստոսի, 1938 թ., № 1495263

Մահվան ակտի յոթերորդ սյունակը լրացնելու ժամանակ անպայման մահացածի տարիքը նշտելու մասին:

Ինչպես հայտնում է ԽՍՀՄ Պետպլանին կից ԺՏՀԿՎ-ը զանազան մարզերից ուղարկված մահվան ակտերի յերկրորդ որինակներն ստուգելուց, հայտնաբերված է մեծ քանակությու ժառանգածների տարիքի վոչ ճիշտ գրանցման դեպքեր: Առանձնապես այդ վերաբերվում է մինչև 5 տարեկան հասակ ունեցող մահացածներին: ՉԱԳՍ-ի աշխատակիցները հաճախ ցույց են տալիս ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, վորը չի համապատասխանում յերեխայի ապրած ճիշտ տարիների, ամիսների և որերի քանակին: Գյուղխորհուրդների մեծամասնությու ռուսաց առաջին յերեսի 7-րդ սյունակում չեն գրանցում տարիքը, այլ այդ գրանցումը կատարում են ակտի մյուս յերեսին՝ «ինչքան ժամանակ է մահացածն ապրել մահվան գրանցման վայրում» սյունակում:

Հաճախ այդ սյունակում նշված տարիները, ամիսները և որերի թիվը փոխանցվում և գրանցվում է մատիտով առաջին յերեսի 7-րդ սյունակում:

Նման գրությունը ԺՏՀ Վարչության կողմից կատարված մշակումները բերում են միանգամայն վոչ ճիշտ արդյունքների:

Անհրաժեշտ և միջոցներ ձեռք առնել շրջաններից ստացվող յերկրորդ որինակները մանրազնին ստուգման յենթարկելու և նշված թերություններն ուղղելու, թույլ չտալով թերություն ունեցող ակտերի ուղարկումը մարզային ԺՏՀՎ:

Անհրաժեշտ է մանրամասն հրահանգել թերություններով ակտեր ներկայացնող բոլոր շրջաններին, մանրազնին ստուգման յենթարկել ակտերի ճիշտ լրացումը:

Ձեռնարկված միջոցների մասին հայտնեք:

ԳԱՂԱԲԱՅԻԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԲԱԺԻՆ

ՆԳԺԿ-Ի ԱՐԽԱՆԳԵԼՄԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԿԱԲ ՊԵՏԻՆ

Պետսեն ԳԿԱԲ ԲՈՂՈՐ ՊԵՏԵՐԻՆ

23 ոգոստոսի 1938 թ., № 1494116

Արխանգելսկի մարզի ԳԿԱԲ-ի կողմից ԽՍՀՄ ՆԳԺԿ ԳԿԱԲ 1938 թ. հունիսի 14-ի № 1492701 դիրեկտիվով առաջադրված խնդիրները միշտ չըմբռնելու մասին:

Դուք գրում եք, վոր գյուղխորհուրդների քարտուղարների խորհրդակցություններ անցկացնելու հնարավորություն չունեք, քանի վոր այժմ շրջանային հրահանգիչները զբաղված են ՆԳԺԿ վարչության պետի առաջադրանքի կատարմամբ, վորը կայանում է ըստ գյուղխորհուրդների ստուգման յենթարկել ազդարնակչությանը գրանցումների մեջ ընդգրկված լինելը:

Ձեր այս նամակը ցույց է տալիս, վոր դուք բոլորովին ձեզ համար չեք պարզել այն խնդիրը, վորը մեր դիրեկտիվով գրված է ձեր առաջ: Խնդիրը կայանում է հետևյալում. վորպեսզի գյուղխորհուրդների քարտուղարների ապագատները շարժողության մեջ դրվի կառավարության 1936 թվի հուլիսի 27-ի վորոշումը կատարելու համար, անհրաժեշտ է հանդիպել քարտուղարների հետ և այդ անել ինչքան կարելի յե շուտ:

Այնքան, վորքան կարճ ժամանակամիջոցում բոլոր գյուղխորհուրդները շրջադայել անհնար է, այդ պատճառով մենք առաջարկել ենք հրավիրել քարտուղարների խորհրդակցություն ըստ շրջանների և այնտեղ նրանց հետ խոսել մեզ հետաքրքրող հարցերի շուրջը: Միանգամայն հասկանալի յե, վոր խորհրդակցության հրավիրելը ինքնանպատակ չէ և այնտեղ, վորտեղ հնարավոր է շրջհրահանգիչին գնալ գյուղ-

խորհուրդ, այդ անկասկած ավելի լավ է: Ճիշտ է, խորհրդակցութիւնը չըջանում ունի այն առավելութիւնը, վոր այնտեղ չըջհրահանգչից բացի ներկա յեն լինում նաև չըջբաժանմունքի պետը, նաև ժՏՀ ներկայացուցիչը, սակայն մյուս կողմից չըջհրահանգչից տեղում հնարավորութիւն ունի քարտուղարի հետ խոսելու ավելի հիմնականորեն և մանրամասն (և բացի այդ, կազմակերպելու կոլտնտեսականներէ, կոմյերտականներէ, բազմազավակներէ և այլոց ակտիվի ոգնութիւնը): Այդ խոշոր առավելութիւն է: Այդ պատճառով միջոցներ ձեռք առեք, վորպեսզի չըջհրահանգչիչները գյուղխորհուրդները մեկնելուց (ինչպիսի գործով էլ ուզում է մեկնեն) անպայման կիրառեն մեր 14-ը հունիսի № 1492701 դիրեկտիվով առաջադրված բոլոր միջոցառումները:

**ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԲԱԺԻՆ
ՔԿԱԲ ԲՈՂՈՐ ՊԵՏԵՐԻՆ,**

16 հուլիսի, 1938 թ., № 1493999

Քաղաքացիական կացութեան ակտերի գրքերից տեղեկութիւնները ծխա-տնտեսական մատյանները փոխանցում կատարելը գյուղխորհուրդների քարտուղարներին թույլատրելու մասին:

Շրջանային ՁԱԳՄ-երի բյուրոներին արեք կարգադրութիւն, չըջջանի կենտրոնում գտնվող գյուղխորհուրդին հնարավորութիւն տալու ամիսը մի անգամ քաղաքացիական կացութեան ակտերի գրքերից փոխանցելու ծխա-տնտեսական մատյան տեղեկութիւններ նոր ծնվածներէ, մահացածներէ, ամուսնացածներէ և ամուսնալուծվածներէ վերաբերյալ:

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԲԱԺԻՆ

ԿԱԶՄ. ՀՐԱՀԱՆԳՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ ՊԵՏԱՆՎՏԱՆ-ԳՈՒԹՅԱՆ ԱՎ. ԼԵՅՏԵՆԱՆՏ ՊՈԿՐՈՎՍԿԻ

ՔԱՂ. ԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՐ ՊԵՏԵՐԻՆ

13 հուլիսի, 1938 թ., № 1493739

Քաղաքացիական պետնպատի առթիվ դիմումներ տալու ժամկետների մասին ԽՍՀՄ Առժողովուրդատի պարտաւճան կից գրութիւնը:

Հարակից ուղարկվում է ԽՍՀ Միութեան Առողջապահական ժողովրդական կոմիտեի գրութեան պատճեն հասցեադրված Յարոսլավի Մարզգործկոմի նախագահին և դիտութիւն:

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԲԱԺԻՆ

ԿԱԶՄ. ՀՐԱՀԱՆԳՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ ՊԵՏԱՆՎՏԱՆ-ԳՈՒԹՅԱՆ ԱՎ. ԼԵՅՏԵՆԱՆՏ ՊՈԿՐՈՎՍԿԻ

ԽՍՀՄ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍՍԱՐԻԱՏ

№ 07-4/2

21 հունիսի, 1938 թ.

Քաղ. Յարոսլավի

ՄԱՐԶԳՈՐԾԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

ի պատասխան №№ 999. 1048

Պատմեն՝ ԽՍՀՄ Ֆինժողկոմի

Պատմեն՝ ԽՍՀՄ ՆԳԺԿ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԲԱԺԻՆ

ԽՍՀՄ Ֆինժողկոմատի հետ համաձայնեցված ԽՍՀՄ Առժողկոմատը հայտնում է՝

Բազմազավակ մայրերին պետական նպաստ նշանակելու և վճարելու կարգի մասին ԽՍՀՄ ժողկոմխորհի կողմից 1937 թ. մայիսի 22-ին հաստատված հրահանգը չի սահմանափակում բազմազավակութեան համար պետական նպաստ նշանակելու միջոցառութիւն հարուցելու ժամկետները: Այդ պատճառով պետական նպաստ կարող է նշանակվել նաև անցած ժամանակի համար, այն դեպքում, յեթե բազմազավակ մայրն այդ նպաստի մասին դիմել է նրա համար իրավունքը ծաղկոտրից մի տարի անց (հրահանգով նախատեսված այլ հանգամանքներ չառկալութեան պայմանով):

Այն դեպքերում, յերբ Մարզգործկոմը անհրաժեշտ է համարում նորաստի վնարումը անցած ժամանակի համար սահմանափակել, նա պարտավոր է տվյալ հարցի վերաբերյալ ամբողջ նյութը յուր յեզրահացութեամբ ներկայացնել ԽՍՀՄ Առժողկոմատ, վորին ԽՍՀՄ ժողկոմխորհի 1938 թվի փետրվարի 22-ի № 245-47 վորոշմամբ թույլատրված է ԽՍՀՄ Ֆինժողկոմատի հետ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վորոշելու 1937 թվի մայիսի 22-ի հրահանգի 5 և 6 հոդ. հոդ. բղիող հարցերը:

ԽՍՀՄ ԱՌժՈՂԿՈՄԱՏԻ ՄՄԳ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

ՄԱՆԱՆՆԻԿՈՎԱ

ՃԻՇՏ Ե՝ ՊԱԿՐՈՎՍԿԻ

ՆԳԺԿ-Ի ԳՈՐԿՈՎՍԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՔԱՂ. ԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻՆ

Պատճեն՝ ՔԱՂ. ԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԲԱԺՆԵՆԵՐԻ ԲՈՂՈՐ ՊԵՏԵՐԻՆ

21 հուլիսի 1938 թ. № 1492674

Անչափաեսա յերեսխաների գրանցված անունները ուղղելու կարգի մասին:

Դուք հարցնում եք այն մասին, թե կարելի՞ չէ բավարարել քաղաքացի Յարլինսկու միջնորդությունը ծննդյան ակտերի գրքում գրանցված յուր աղջիկ Ռեվեկկի անունը վերա-ի ուղղելու մասին:

Հայտնում եմ՝ ինչպես յերևում է հիշված դիմումին, կցված փաստաթղթերից (դպրոցի, տնային կառավարչության տեղեկանքները և այլն) անվան ուղղման հարցը ծագել է նրանից, վոր Յարլինսկու աղջկանը մանկությունից չըջապատում բոլորի կողմից կոչվել է վոչ թե Ռեվեկկա, ինչպես նա գրված է ծննդյան ակտերի գրքում, այլ՝ Վերա: Տվյալ դեպքում, չնայած, վոր գրքերում գրանցումը կատարված է յեղել ճիշտ և այդ մասին վեճ չկա, սակայն ի նկատի ունենալով այն փաստը, վոր աղջկանը բոլորը կոչել են Վերա և նա ինքը ուրիշ անուն չի ունեցել և վոր տվյալ դեպքում մենք գործ չունենք անունը փոխելու միջոցով վորևե մեկի հանցագործ անցյալը թաղցնելու և այլնի փորձ կատարելու հետ, ԽՍՀՄ ՆԳԺԿ ՔԿԱԲ գտնում է հնարավոր՝ կատարելու դիմողի խնդիրը գրանցումն ուղղելու մասին:

Այդ վոգով պետք է քննել ու վճռել անչափաեսա յերեսխաների անունները փոխելու մասին յեղած նույնանման դիմումները. յեթե ծնողների միջնորդությունը հիմնավորված է և վստահություն է ներշնչում, գրանցման գրքերում նրանց խնդրած ուղղումները կարելի չէ կատարել: Այդ դեպքում պետք է նկատի առնել, վոր միայն ծնողների դիմումների վրա հիմնվել վոչ մի դեպքում չի կարելի: Անհրաժեշտ է յուրաքանչյուր առանձին դեպքում համոզվել նրանում, վոր անվան փոփոխման հարցի ծագումը իսկապես կենսական պահանջ է և վոչ միայն ծնողների ցանկություն: Յերեսխանի անվան ամեն մի փոփոխում պետք է հիմնավորված լինի հետեվյալ փաստաթղթերով՝ դպրոցի, տնային կառավարչության, պիոներական և կոմյերիտական կազմակերպությունների և այլ տեղեկանքներով:

Այն դեպքերում, յերբ ՉԱԳՍ-ի որդանները վորևե կասկածի առ-

կայության դեպքում իրենք անմիջականորեն չեն կարողանում վորոչել յերեսխանի գրանցումն ուղղելու հարցը, ծնողների դիմումը համապատասխան փաստաթղթերի հետ պետք է ուղարկել ԽՍՀՄ ՆԳԺԿ ՔԿԱԲ՝ հարցը լուծելու համար:

Ինչ վերաբերվում է ծննդյան ակտերի գրքերում չափահաս անձանց անվան, ազգանվան ուղղում կատարելուն, այդ դեպքերում գործը բոլորովին այլ բնույթ է կրում: Այն դեպքերում, յերբ ՉԱԳՍ-ի որդանները գտնում են, վոր ակտերի գրքերում գրանցումը կատարված է ճիշտ և հետևապես խնդրատուն չի ունեցել վոչ մի հիմք և իրավունք՝ փոխելու յուր անուն ազգանունը, գրանցումն ուղղելու մասին դիմումը պետք է մերժել: Խնդրատուն կարելի չէ բացատրել, վոր անունը կամ ազգանունը նա կարող է փոխել միայն անուն ազգանունը փոխելու մասին յեղած ընդհանուր կանոններով:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԲԱԺԻՆ

ՔԱՂ. ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՐ ՊԵՏԵՐԻՆ

14 հունիսի, 1938 թ. № 1492657

Չոգտագործված բլանկներով ՁԱԳՍ-երի գրեքը արխիվ հանձնելն արգելելու մասին:

Մի շարք հանրապետություններում և մարզերում մեր կողմից կատարված հետազոտությունների միջոցով հայտնաբերված և տարվա վերջին ՁԱԳՍ-երի գրեքը արխիվ հանձնելու դեպքեր չոգտագործված 10-20 յերբեմն ավելի թվով բլանկներով:

Հետագայում նման դեպքերը կրկնվելուց խուսափելու համար, առաջարկում ենք Ձեզ, բոլոր ՁԱԳՍ-երին հրահանգել այն մասին, վոր գրեքը չոգտագործված բլանկներով չհանձնվեն արխիվ, այլ շարունակվեն նաև նոր տարում համարակալումը սկսելով առաջին համարից և միայն բոլոր բլանկները ոգտագործելուց հետո զերբը հանձնել արխիվ:

Տեղերում հետազոտություն կատարելու ժամանակ այս դրու-թյունը պետք է մանրամասն ստուգման յենթարկվի:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԲԱԺԻՆ

ՔԱՂԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՐ ՊԵՏԵՐԻՆ.—

14 հունիսի 1938 թ. № 1492701

Բնակչությանը հարյուր տոկոսով Բաղաբացիական կա-ցության Ակտերի գրանցումով ընդգրկելու միջոցառում-ների մասին:

Բնակչության բնական շարժման հաշվառման գործում ունենք վորոչ հաջողություններ, այնուամենայնիվ մի շարք մարզերում և

հանրապետություններում հատկապես ծայրամասերում բնակչու-թյան ընդգրկումը, Բաղաբացիական կացության Ակտերի գրանցու-մա դեռևս հեռու յե լրիվ լինելուց:

ՈՍՀՄ Կենտրոնական և Ժողովրդավար 1936 թվի հունիսի 27-ի վորոշումը՝ ծննդյան և մահվան գրանցումը պարտադիր լինելու մա-սին, մինչ այժմ չի հասցված գյուղական բնակչության լայն մաս-սաներին, մասնավորապես առանձին շրջաններում:

Վատ և կիրառվում հիշված վորոշման 4-րդ և 6-րդ կետերը, ըստ վորի գյուղխորհուրդների քարտուղարների վրա պարտականու-թյուն և դրվում ազդարարել բնակչությանը կառավարություն այդ որենքի մասին, ապահովել հարյուր տոկոսով և ժամանակին ծնունդ-ների ու մահացությունների գրանցումը: Գյուղխորհուրդների քար-տուղարների մեծ մասն անդամ չգլխեն այդ որենքի գոյություն մա-սին: Կառավարության այդ վորոշմամբ նախատեսված գյուղ-խորհուրդների քարտուղարներին ՌՆՖՍՀ Քր. Որ. քրեական պա-տասխանատվության կանչելը իրենց վրա դրված պարտականու-թյունները՝ ծնունդների և մահացությունների լրիվ գրանցումը ա-պահովելու գործը չկատարելու համար, վորպես կանոն անտես և առնվում: Նույնը և քաղաքացիներին 25-100 ո. տուգանելու վերա-բերյալ ժամանակին գրանցել տալուց խուսափելու համար:

Պետական նպաստ վճարելու վերաբերյալ որենքը, վորը պետք է խոշոր խթան հանդիսանար ծնունդները ժամանակին և գլխովին գրանցելու համար, շատ դեպքերում տեղական կազմակերպություննե-րի և մեր աշխատակիցների բացատրական թույլ աշխատանքի շնորհիվ այդպիսի խթան չի հանդիսանում, բնակչությանը չի բացատրված ծնունդները ժամանակին գրանցելու, նրանց շահագրգռվածու-թյունը չի պարզաբանված վոր միայն ժամանակին գրանցել տալը կարող է փրկել նրանց յերեխաները տվյալ մոր պատկանելու-թյունը ապացուցե-լու դեվար և բարդ գործից և հնարավորություն կտա կարճ ժամա-նակամիջոցում առանց վորևե ձգձգումի ձեվակերպելու բաղմաղավա-կություն համար պետնպաստ ստանալու գործը:

Անկասկած կառավարության 1936 թ. հունիսի 27-ի և հունիսի 27-ի վերհիշված վորոշումների իրականացման դեպքում, բնակչու-թյան ընդգրկման և ծնունդների ժամանակին գրանցելու հաջողու-թյունը կլինեք ավելի շատ և ընդգրկման տոկոսը հասցրված կլինեք մինիմումի:

Վողջ բնակչութիւնը գրանցումներով ընդգրկելու հարցը 1939թ. հունվարին կայանալիք մարդահամարի կապակցութեամբ առանձնահատուկ նշանակութիւնն է ստանում:

— Միանգամայն պարզ է, վոր ինքը մարդահամարը տալիս է ազգաբնակչութիւն միճակագրութիւն միանվագ պատկերը, և մեր խնդիրը կայանում է նրանում, վոր մարդահամարի արդյունքների հիման վրա բնակչութիւնը հարյուր տոկոսով գրանցումների ընդգրկմամբ հետագայում ապահովենք բնակչութիւնը բնական շարժման ճիշտ հաշվառումը:

Նկատի ունենալով, վոր մինչ մարդահամարը մնացած ժամանակը սահմանափակ է, անհրաժեշտ է հենց այժմ ձեռք առնել ամենավճռական միջոցներ, 1939 թվին ապահովելու բնակչութիւնը գրանցումներով լրիվ ընդգրկելը: Անհրաժեշտ է կոնկրետ ձեռնարկել հետեւյալը՝

1. Շրջգործկոմների թուլացումները չընկնեցողներում հրավիրել գյուղխորհուրդների քարտուղարների խորհրդակցութիւններ, վորտեղ ՁԱԳՍ-երի այլ հարցերից բացի (հրահանգի մշակումը, ակտերը վորակով գրանցելը և այլն) դնել շրջանային հրահանգչի հատուկ գեկուցումը (չըջ. բաժնետի մասնակցութեամբ) շըջանի բնակչութիւնը գրանցմամբ ընդգրկելու մասին:

Ձեկուցման մեջ հատկապէս ընդգծել ՈՍՀՄ ԿԳԿ-ի և Ժողկոմխորհի 1936 թ. հուլիսի 27-ի վորոշմամբ Գյուղխորհուրդների քարտուղարների վրա դրված անձնական պատասխանատւութիւնը բնակչութիւնը լրիվ գրանցումներով ընդգրկելու համար. հարցը դնել հետեւյալ ձեւով:

Գյուղխորհուրդների քարտուղարներն անձամբ իմանում են կամ կարող են իմանալ գյուղխորհուրդների մյուս անդամների և կոլխոզի ակտիվի միջոցով տվյալ գյուղի ընտանիքների մեջ տեղի ունեցած բոլոր փոփոխութիւնները և ունեն բոլոր հնարավորութիւնները ազդելու այն անձանց վրա, վորոնք խուսափում են քաղաքացիական կացութիւնը գրանցել տալուց:

Անգամ այն ազգային կետերում, վորտեղ կրօնական և այլ դավանութիւններն ու նախապաշարումները դեռևս ուժեղ են, կոլխոզի կոմսոմոլի և այլ կազմակերպութիւնների հասարակական ազդեցութիւնը, անկասկած կունենա ցանկացած ներգործութիւնը:

Անհրաժեշտ է միայն վորպեսզի գյուղխորհուրդի քարտուղարը,

վորի վրա կառավարութիւնը դրել է այդ պարտականութիւնները, հանդիսանա այդ հասարակական ազդեցութիւն կազմակերպչը:

Բացատրելով գյուղխորհուրդների քարտուղարներին կառավարութիւն վորոշմամբ նրանց վրա դրված խնդիրների լրջութիւնն ու կարեւորութիւնը, նախազգուշացնել նրանց ՌԽՍՀ Քր. Որ. 111 հոդ. և այլ հանրապետութիւնների Քր. Որ. համապատասխան հոդվածների նրանց նկատմամբ կիրառելու մասին, ըստ վորի պատժվում են նշված վորոշումը չկատարելու համար:

2. Որհնդակցութիւններում հատուկ ուշադրութիւն դարձնել այն գյուղխորհուրդների վրա, վորտեղ մինչ այժմ գրանցումներ բորորովին չի կատարվել կամ կատարվել է շատ քիչ չափով:

Առաջարկել այդ գյուղխորհուրդների քարտուղարներին յերկու ամսվա ընթացքում կազմակերպել ակտիվիստների խմբակներ, վորոնց միջոցով նրանք կարող կլինեն հսկողութիւն սահմանել բոլոր ծննդյան և մահվան դեպքերի վրա և համապատասխան միջոցներ ձեռք առնել գրանցման յենթարկելու այդպիսիք: Այդ ժամկետը լրանալուց հետո, յեթե ազգաբնակչութիւնը գրանցմամբ ընդգրկելու գործի մեջ վոչ մի բարելավում տեղի չի ունենա, համաձայն ՈՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1936 թ. հուլիսի 27-ի վորոշման 4-րդ և 6-րդ կետերի, գյուղխորհուրդների առավել չարամիտ քարտուղարներին կանչել պատասխանատւութիւն:

3. Գյուղական խորհուրդների քարտուղարների շրջանային խորհրդակցութիւններ անցկացնելու հետ միաժամանակ Մարդային (Յերկրային կամ հանրապետական) կուսակցական և հասարակական կազմակերպութիւնների առաջ հարց դնել շրջանային մամուլում և գյուղխորհուրդներում լայն բացատրական աշխատանք կատարելու Ձազանքում պարտադիր կարգով և ժամանակին ծննդյան և մահվան դեպքերը գրանցելու մասին: Միաժամանակ նպաստ ստացող բազմազան մայրերից կազմակերպել ակտիվ, հանձնարարելով նրանց բնակչութիւն կողմից քաղաքացիական կացութիւն ակտերը գրանցելու վրա մշտական հսկողութիւն ունենալ:

4. Գյուղխորհուրդների, կոլտնտեսութիւնների և բազմազան մայրերի ակտիվի միջոցով բացատրել բազմազանութիւնների փոստաթղթերի ձեակերպման կարգը, ապացուցելով բազմազան մայրերի համար ծնունդը ժամանակին գրանցելը ձեռնառու լինելը:

5. Գյուղխորհուրդների քարտուղարների և գյուղխորհուրդների

11-284094



միջեվ սոց-մրցման պայմանագրեր կնքելիս առանձին կես մտցնել բնակչությանը գրանցման մեջ ընդգրկելուն ոժանդակող ակտիվ կազմակերպելու հարցը և պարտավորություն այդ ընդգրկումը խորհրդացնելու մասին:

6. Պայմանավորվել մարզային, Յերկրային և Հանրապետական ԺՏՀՎ հետ, նրանց շրջանային տեսուչների մասնակցությամբ մասին ազգաբնակչությանը լրիվ գրանցման մեջ ընդգրկելու համար անցկացվող ձեռնարկումներում:

7. ՔԿԱԲ-ներին մշակել նշված ձեռնարկումները ըստ շրջանների անցկացնելու կոնկրետ ծրագրեր և հսկել նրանց կիրառման վրա, թույլ չտալով այդ գործում ինքնահոս և պատահականություններ:

8. Վերը նշված միջոցառումները սպառիչ չեն և չեն բացառում այլ նպատակահարմար միջոցառումներ: Բոլոր նման միջոցառումների մասին հայտնեք ԽՍՀՄ ՆԳՏԿ-ի ՔԿԱԲ մյուս ՔԿԱԲ առաջադրելու համար:

Նշված միջոցառումների կիրառման մասին կանոնավոր ինֆորմացիա ուղարկեք մեզ:

ԴԱՂԱԲԱՅԻԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԲԱԺԻՆ

ԲԱԺԻՆ 3

ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻԱ

1. ՀԱՐՑ.— Բաղ. կացության ակտերի գրանցումը վարելու կարգի մասին ԽՍՀՄ ՆԳՏԿ-ի հրահանգի 156-րդ հոդվածը նախատեսում է՝ Բաղաբացիական կացության ակտերի գրանցումների վերականգնումը ներկայացվող այն փաստաթղթերի հիման վրա, վորոնք հաստատում են գրանցումների գոյության փաստը կամ դատական վճիռների հիման վրա: Սակայն դատական որգանքերը չեն ընդունում իրենց վարույթի տակ գրանցումները վերականգնելու գործեր: Ի՞նչպես վարվել նման դեպքերում:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Իսկապես դատարանները չեն ընդունում իրենց վարույթի տակ հատկապես Բաղաբացիական կացության ակտերի գրանցումները վերականգնելու գործեր: Բայց մի շարք Բաղաբացիական գործեր (ապրուստի միջոցների, բնակարանային, ժառանգության և այլն), վորոնց քննության ժամանակ դատարանները վճիռներ են կայացնում տարիքը վերականգնելու, ծննդյան, ամուսնության, ամուսնալուծության, մահվան, հայրությանը սահմանելու մասին: Ահա նման վճիռները կարող են ՋԱԿՍ-ի համար հիմք ծառայել, համապատասխան ակտ լրացնելու համար: Անհրաժեշտ է միայն, վոր վճիռները պարունակեն ակտը լրացնելու անհրաժեշտ տվյալները (ամուսն, հայրանուն, ազգանուն, ք-վականը և այլն): Որինակ՝ 1938 թ. ամուսնի ենթ իվանովների բնակարա-

նային հարցը քննելու ժամանակ ժողովրդական դատաբանը գտել է հաստատված, վոր Իվանովների ամուսնությունը փաստորեն լուծվել է դեռ յետ 1934 թ. հունվարի 10-ին, բայց Իվանովները չեն ձեռնարկել ամուսնալուծությունը: Իվանովներից մեկն ու մեկը յեթե դիմի ԶԱԳՍ և խնդրի այդ վնիտի հիման վրա իրեն տույն ամուսնալուծության վկայական ԶԱԳՍ-ը պարտավոր է այդ դիմումը բավարարել:

Այսպես պետք է հասկանալ հրահանգի 156 հոդվածը:

2. ԶԱԳՍ.— Բաղաձայնի Ֆետոդորովը ներկայացել է շրջ. ԶԱԳՍ և հայտարարել, վոր նա կորցրել է բոլոր փաստաթղթերը, այդ թվում անձնագիրը և 1895 թվին Տուլայում տրված ծննդյան վկայականը (մետրիկան) ներկայացնելով միլիցիայի շրջ. բաժանմունքի տեղեկանքը առ այն, վոր նա հայտարարել է փաստաթղթերը կորցնելու մասին, Ֆետոդորովը խնդրում է վերականգնել ծննդյան գրանցումը. նա իր դիմումին կցել է Տուլայի շրջագահի տեղեկանքը այն մասին, վոր 1895 թ. գրանցումների գիրքը վնչնչացված է: Ինչպես պետք է վարվեր շրջանային գագարը:

ՊՍՏԱՍԽԱՆ.— Ծննդյան գրանցումների վերականգնումը չափազանց լուրջ և պատասխանատու գործ է: Մի կողմից մենք չենք կարող հաշվի չառնել այն փաստը, վոր բնակչության գգալի մասը իր ժամանակին ընդգրկված չի յեղել գրանցման մեջ, չենք կարող հաշվի չառնել փաստաթղթերը գողանալու և կորցվելու բազմաթիվ դեպքերը, մյուս կողմից ծննդյան վկայականը հանդիսանում է հիմնական փաստաթուղթ անձնագիր ստանալու համար այդ պատճառով անխուսափելի յեն անբարեխիղճ (չարամտորեն) միջնորդությունների դեպքերը վերականգված վկայականներ տալու մասին:

Ծննդյան գրանցումը վերականգնելու ժամանակ մենք պետք է հիմնովին հավատացած լինենք նրանում, վոր իրոք գործ ունենք

այն անձնավորության հետ, վորը ներկայացնում է իրեն վերականգնվողը և վոր գրանցման վերականգնումը նրան հարկավոր է որինական նպատակներով: Այդ իսկ պատճառով ԽՍՀՄ ՆԳԺԿ-ի հրահանգի 161-րդ հոդվածը պահանջում է ԶԱԳՍԻՑ մի ամսվա ընթացքում ստուգել տրված տվյալները: Ինչպե՞ս վարվել քաղ. Ֆետոդորովի հետ:

Մանրամասն հարց ու փորձ անելուց, նրա վերջին 5 տարվա կյանքի հիմնական ետապների մասին և պարզելով, վոր այդ ետապները կարող են հաստատվել, շրջագագար պարտավոր է՝

1. Հարցում կատարել ՔԿԱԲ և ԲԳՄ համապատասխան որգաններին և

2. Ձեռնարկել ստուգման բոլոր այլ միջոցները:

Յեթե ստուգման միջոցով Ֆետոդորովի հայտարարությունը հաստատվի, շրջագագար պարտավոր կլինի Ֆետոդորովին ուղարկել բժշկական հանձնաժողովի տարիքը վորոշելու համար և ապա վերականգնել նրա ծննդյան գրանցումը: Ինքստինիչյան հասկանալի յե, վոր տարբեր կատեգորիայի անձանց ծննդյան գրանցումների վերականգնմանը պետք է տարբեր ձևով մոտեցում ունենալ՝ այսպես ծնողների հետ ապրող պատանու գրանցման ձեռնարկումը կարող է կատարվել զգալիորեն պարզեցված ձևով, իսկ տվյալ վայրը նորերս ժամանած բոլորին անհայտ բաղաձայնները կապված է մանրագին ստուգում կատարելու հետ:

3. ԶԱԳՍ.— Քաղ. Ի. Վ. Մոկրովը, վորի ծնողները նույնպես կրել են «Մոկրովներ» ազգանունը, վորը նայել ակտերի գրքերում գրանցված է Մոկրով ազգանվան տակ, իր ասելով նրան մանկությունից հայտնի չե թե ինչու կրույվ է Մոկրենով ազգանունը:

Այդ ազգանվամբ, նա իբր թե սովորել է դպրոցում, ծառայել է բանակում, դատապարտվել է քրեական հանցագործության համար և հեռացված է յեղել կուսակցությունից: Նրա խնդրանքով Շրջագագարը նրան տվել է վկայական յերկու ազգանունով՝ Մոկրով— Մոկրենով: Հարց է ծագում միշտ է վարվել շրջագագար, և յեթե միշտ չե, ապա վար ազգանունով պետք է ձեռնարկվեր փաստաթուղթը:

ՊՍՏԱՍԽԱՆ.— Չագսի կողմից տրվող յուրաքանչյուր վկայական, լինի դա առաջին անգամ թե կրկնակի, տրվում է միայն ակտերի գրքերում կատարված գրանցումների հիման

վրա: Յեթե խնդրատուն, վարը կրում է վոչ քե այն ազգանունը վորով գրանցված է ակտերի գրքում, այլ մի ուրիշ ազգանուն և զագսի առաջ ակտերի գրքերը գրանցումները փոխելու հարց է առաջադրում, ապա նման փոփոխությունը կարող է կատարվել յերկու մե- վով՝ կամ գրանցումը ուղղելու միջոցով, կամ ազգա- նունը, անունը փոխելու կարգով:

Տվյալ կոնկրետ դեպքում կա՞րող է քաղ. Մոկրով Կախանջ դեմ յուր ծննդյան գրանցումն ուղղելու:

ԽՍՀՄ ՆԳԺԿ. զագսերի վերաբերյալ հրահանգի 147 հոդ. սոված է. «Քաղաքացիական կացութեան ակտե- րում գրանցված վոչ միշտ տեղեկությունները (ազգա- նունը, անունը հայրանունը և այլն գրանցելու ժամա- նակ սխալներ) կարող են ուղղվել շահագրգռված ան- ձանց հայտարարության հիման վրա»: Համապատաս- խանում է արդյոք քաղաքացի Մոկրովի դեպքը հրա- հանգի այդ հոդվածին: Վոչ, չի համապատասխանում. քաղաքացի Մոկրովի հայտարարությամբ նրա ծնողները նույնպես կրել են Մոկրովներ ազգանունը, իսկ Մոկրով ազգանունը ինքն է ձեռք բերել անհայտ է, յերբ և ինչպի- սի պարագաներում: Հետևապես վոչ մի խոսք լինել չի կարող, վոչ միշտ կամ սխալ գրանցման մասին և այդ պատճառով Մոկրովի գրանցումը Մոկրովի ուղղելու համար վոչ մի հիմք չկա: Տվյալ դեպքում մնում է միակ միջոցը՝ փոխել Մոկրով ազգանունը. Մոկրովի, ազգա- նունը և անունը փոխելու ընդհանուր կարգով: Այդ միշտ կլինի առավել ևս նրա համար, վոր տվյալ դեպքում քաղ. Մոկրովը քրեական գործով դատապարտվել է և բո- յոր հիմքերը կա կասկածելու նրան Մոկրով ազգանունը անորինական կարգով յուրացնելու վորչեմը հանցանք քաղցնելու նպատակով. Ազգանունը փոխելը գրանցելու ժամանակ այդ մոմենտները նշտելու բոլոր հնարավորու- րությունները մեկ ունեմ (կենտրոնական քերթում հրա- տարակել և այլն): Ինչ վերաբերվում է Ջագսի վորոշ- մանը նրան յերկու ազգանունով փաստաթղթեր տալու

հանի վոր դա հակասում է հրահանգի 62 հոդվածին, այդ պատճառով անբույլատրելի յե:

4. ՀԱՐՅ. Ջագսերում շատ բողոքներ են ստացվում Ազգանուն կամ անուն փոխել ցանկացող քաղաքացիներից այն մասին, վոր փոխելու պրոցեսը տեղում է չափազանց յերկար, յերբեմն մեկ տարի և ավելի: Կարելի՞ յե շտապ դեպքերում (փաստաթղթերը փոխելու և այլն) փոխել ազգանունը կամ անունը առանց կենտրոնական մամու- լում հրապարակելու:

ՊԼՏԱՍԽԱՆ. Անուն կամ ազգանունը փոխելու մասին կենտրոնական մամուլում հայտարարություն տալու կարգը սահմանված է կառավարության կողմից: Հայտարարություն տալը պայմանավորված է նրանով, վոր վորոշ հանցագործ ելեմենտներ փորձում են քաղցնելու իրենց հանցագործ անցյալը, ալիմենտի վերաբերյալ քաղցնել է և այլն ազգանունը կամ անունը փոխելու միջոցով:

Այդ պատճառով առանց մամուլում հայտարարու- րություն տալու փոխել ազգանունը կամ անունը չի բույլատրվում: Ինչ վերաբերվում է այդ փոխելու պրոցեսի ժամանակի յերկար տեղադրության մասին յեղած բողոք- ներին ինչպես ցույց է տվել վերջին ժամանակների փոր- ձը, ձգձգումը հանախ տեղի յե ունենում իրենց՝ զագսե- րի մեղքով, վորոնք չնայած ազգանուն կամ անուն փո- խելու վերաբերյալ նյութերը «Իզվեստիա» քերթում հայտարարելու համար ուղարկելու մասին սահմանված կայուն կարգի, հանախ այդ կարգը խախտում են, վորի հետևանքով նյութը վերադարձվում է Ջագս լրացուցիչ ձեմակերպման համար, վորը բնականորեն յերկարաց- նում է փոխելու ձեմակերպման ժամանակը: Հիշեց- նում ենք զագսերին անուն և ազգանուն փոխելու առ- քիվ նյութերը ուղարկելու կարգը «Իզվեստիա» կենտ- րոնական քերթում հայտարարելու համար (սահման- ված է 1937 թ-վի սեպտեմբերի 21-ին):

1. Ազգանուն և անուն փոխելու մասին բոլոր հայտարարութիւնները զազսի շրջադրուրոյն կողմից ուղարկվում է մարզի, յերկրի, հանրապետութեան համապատասխան ԳԿԱ Բաժին, իսկ վերջինս ծանոթանալուց հետո նյութը ներկայացնում է ԽՍՀՄ ՆԳԺԿ, ԳՆԱԲ, «ԻԶՎԵՍՏԻԱ» թերթում հրատարակելու համար:

2. Խնդրատուի, «Իզվեստիայում» հայտարարելու համար ստացված գրամը (100 ռ.) զազսի կողմից անմիջապէս ուղարկվում է «Իզվեստիայ»-ի խմբագրութեանը ցույց տալով խնդրատուի ազգանուն, անուն, հայրանունը:

3. Համապատասխան ԳԿԱԲ հասցեյին՝ Չաղսին, բացի հայտարարութեան բովանդակութեանից ազգանուն կամ անուն փոխող անձանց մասին ուղարկվում է նաեւ հետեւյալ տեղեկութիւնները ա). Ազգանուն, անուն, հայրանուն. բ). ծննդավայրի անունը և ծննդյան ժամանակը. գ). ծառայութեան վայրը և պաշտոնը. զ). բնակութեան վերջին վայրը (ճիշտ հասցեն) յե). անձնագրի №-ը յեր. և ում կողմից է տրված. զ). նոր ազգանունը կամ անունը, ե). ազգանունը կամ անունը փոխելու պատճառը:

4. Հայտարարութեան տեքստը մոտաշորապէս հետեւյալն է: «Մարֆա Դիմիտրի Ֆեոդորովա, 1896 թ. ծնված, ծագումով Ռուսաստանի մարզի Ալեքսանդրովսկի շրջանի Նոր-Վարանցովկա գյուղից, ապրում է Ռոստով Դոնի վրա քաղաքում, փոխում է անունը՝ Աննայի: Քաղաք Ռոստով-Դոնի վրա Լենինյան շրջազս»:

5. ՀԱՐՑ.— Ի՞նչպէս վարվել այն դեպքերում, յերբ ծննդյան յեկեղեցական գրքերում նշված չի լինում գրանցվածների ազգանունները, ճի՞շտ են վարվում այն զազսերը վորոնք այդ դեպքերում ծննդյան վկայական են դուրս գրում առանց ազգանունը ցույց տալու:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Առանց ազգանունը ցույց տալու գրանցումները յեկեղեցական գրքերում կատարվել է տերտերների կողմից, գլխավորապէս այսպէս փոշված «ապորինի ծնված» յերեխաներին գրանցելու ժամանակ:

Ի՞նչ հետեւանք է մի կողմից տերտերների կողմից կիրառվող գրքերի քաղաքականութեան հանդէպ այսպէս կոչված «կրոնական բարոյականութիւնը» խախտողների, մյուս կողմից մայրերի վախի և չցանկանալուն հայտնելու առանց ամուսնանալու ծնված յերեխայի

հոր ազգանունը, իսկ յերեխաներին մոր ազգանունով գրանցելը վերջ հիշված պատճառներով տերտերները մերժում եյին:

Համաձայն խորհրդային որենքների վոչ մի տարբերութեան չէ՞ր գրանցված և չգրանցված ամուսնութեանից ծնված յերեխաների միջև: Այդ պատճառով այն ՉԱԳՍ-երի գործողութեանը, վորոնք ծննդյան վկայական են դուրս գրում առանց ազգանունը ցույց տալու, միայն այն հիման վրա, վոր յեկեղեցական համապատասխան գրքերում նշված չէ ազգանունը, յտրոյվին ճիշտ չէ: Մենդյան վկայական տալու ժամանակ բոլոր դեպքերում ազգանունը ցույց տալը պարտադիր է: Յեկեղեցական գրանցումներով, վորտեղ ազգանունը չի նշված, ծննդյան վկայական դուրս գրելու ժամանակ, ազգանունը գրվում է խնդրատուների հայտարարութեան հիման վրա, վորոնք պարտաւոր են փաստաթղթերով կամ յերկու հոգու վկայութեամբ հաստատել, վոր նրանք մանկութեանից կրում են իրենց ցույց տրված ազգանունը: Յեթե խնդրատուներն իրենց ցույց տված ազգանունը կրելու հանդամանքը հաստատող վոչ մի փաստաթուղթ չունեն (փաստաթղթերը կորցնելու կամ գողանալու դեպքերում) նաեւ անհար է ներկայացնել վկաների հաստատութեան, վկայական տալը հետաձգվում է խնդրատուի ինքնութեանը ստուգելու համար: Այս դեպքում ստուգումը կատարվում է այնպէս, ինչպէս ծննդյան գրանցումը վերականգնելու ժամանակ (տես՝ ԽՍՀՄ ՆԳԺԿ ՉԱԳՍ-ի վերաբերյալ հրահանգի 159, 160 և 161 հոդվածները):

6. ՀԱՐՑ.— Միակողմանի ամուսնալուծութեան գրանցելու ժամանակ— յերկրորդ ամուսինը, վորին ՉԱԳՍ-ը ծանուցում է ուղարկում ամուսնալուծութեան առթիւ ստացված դիմումի մասին. սովորաբար հաստատում չեն ուղարկում ծանուցումն ստանալու մասին և նման դեպքերում ՉԱԳՍ-ը կամ մերժում է միակողմանի ամուսնալուծութեան կատարել, կամ բավարարվում է փաստի հաղորդագրութեամբ այն մասին, վոր նման կը հանձնրված է: ՉԱԳՍ-երը մեծ մասամբ իրագործում են վերջինը: Ճի՞շտ է արդոյ՞ հրահանգի 8-րդ գլխի նման մեկնաբանումը:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Ամուսնալուծութեան մասին նոր որենքը, վորը կըրատարակված է կառավարութեան 1936 թ-վի հունիսի 27-ի արարտներն արգելելու վորոշման մեջ, նախատես-

նում է ամուսնալուծութիւն գրանցելու ժամանակ յերկու ամուսիններին հրավիրելը: Ամուսնալուծութիւնը գրանցելու այդ նոր կարգը անհրաժեշտ է, յերկրորդ ամուսնու պահանջը յերեխաների և անաշխատունակ ամուսնու պահանջը հայտարարելու համար: Այստեղից պարզ է, վոր յերկրորդ ամուսինը (համախօս կինը) առավելապես շահագրգռված է կամ ինքը ներկայացնում ԶԱԳՍ և յուր պահանջն առաջադրելու ամուսնալուծութեան համար դիմող ամուսնուն, կամ գոնե գրավոր ձևով հայտնի իր պահանջները: Քայց հարցը նրանումն է, վոր յերկրորդ ամուսինը (կինը) ամուսնալուծութիւնը գրանցելու կարգի հետ ծանոթ չլինելով, սխալ է կարծում, վոր իբր թէ ԶԱԳՍ չներկայանալով կվիժեցնի ամուսնալուծութեան գրանցումը: Այդ իսկ պատճառով ԶԱԳՍ-ի աշխատակիցը, վորը չպետք է մոռանա ամուսնալուծութեան մասին նոր որեւէ հիմնական նպատակը, չպետք է սամեանափակվի միայն նրանով, վոր փաստի գրքում մի վումն ստորագրել է ԶԱԳՍ հրավիրելու մասին ծանուցագիրը ստանալու մասին, այլ պարտավոր է կրկին ծանուցում ուղարկել և առաջարկել հայտնել ԶԱԳՍ չներկայանալու պատճառները: Միայն յերկրորդ ամուսնուց պատասխան ստանալուց հետո կամ յերբ ԶԱԳՍ-ի աշխատակիցը նշտորեն պարզել է, վոր ծանուցումը յերկրորդ ամուսնուն հանձնված է և հետևապես յերկրորդ ամուսինը հրաժարվում է յուր շահերը պաշտպանելուց, ամուսնալուծութիւնը կարող է գրանցվել միայն դիմողի ներկայութեամբ: Յեթ ԶԱԳՍ-ի աշխատակիցը նիշտ տեղեկութիւն չունի յերկրորդ ամուսնուն ծանուցումը հանձնելու մասին, ամուսնալուծութիւնը չպետք է գրանցվի մինչև ամուսնալուծութեան մասին դիմում ստանալու որից վեց ամսվա ժամկետը լրանալը:

Ի նկատի ունենալով, վոր ինչպես վերն է հիշատակված, շատ կանայք կարծում են, վոր յեթ նրանք չներկայանան ԶԱԳՍ, այդպիսով կվիժեցնեն ամուսնալուծութեան գրանցումը, անհրաժեշտ է նրանց ուղարկվող ծանուցման մեջ նշգրիտ նշել, վոր ԶԱԳՍ ներկայա-

նալն անհրաժեշտ է նրա համար, վոր ամուսնալուծութիւնը գրանցելու ժամանակ ԶԱԳՍ-ը կարողանա պաշտպանել յերեխաների և անաշխատունակ ամուսնու շահերը, և վոր նա ԶԱԳՍ չներկայանալով կամ ծանուցումը ստանալու հաստատում չուղարկելով չի վիժեցնի ամուսնալուծութիւնը, քանի վոր այդպիսին կգրանցվի իր բացակայութեամբ և այդպիսով անկասկած վնաս կըհասցնի իրեն և յերեխաներին (տես՝ ԽՍՀՄ ՆԳԺԿ-ի 1938 թ. մարտի 27-ի նո. 57 շրջաբերականը):

7. ՀԱՐՑ. — Յերեխաներ վորդեգրած քաղաքացիներից ԶԱԳՍ-երում ստացվում են բազմաթիվ դիմումներ, վորով խնդրում են իրենց տալ համապատասխան փաստաթղթեր, վորոնցով նրանք կոչվեն վոչ թե վորդեգրողներ, այլ ծնողներ:

Այդ դիմումները պատճառաբանված են նրանով. վոր յերեխաները նրանց կողմից վորդեգրված են վաղ հասակից և դաստիարակվում են այն գիտակցութեամբ. վոր իրենք ապրում են իրենց իսկական (արյունակցական) ծնողների մոտ: Ի՞նչպես վարվել նման դեպքերում: Կարո՞ղ են ԶԱԳՍ-երը բավարարել այդ խնդիրները և վորդեգրողներին տալ վորդեգրութեան վկայականի փոխարեն ծննդյան վկայական:

ՊԱՏԱՍԽԱՆ. — Վորդեգրողների խնդիրները վորդեգրված յերեխաներին վորդեգրութեան վկայականների փոխարեն ծննդյան վկայականներ տալու մասին ԶԱԳՍ-երը իրավունք չունեն բավարարելու հետևյալ պատճառներով:

Քաղաքացիական կացութեան ակտերի գրանցումը ունի ազգաբնակչութեան բնական շարժման հաշվառման իր հիմնական նպատակը և պետք է արտացոլի գրանցման յեթեմեկ իրական ակտերը և դեպքերը: Այդ նշանակում է, վոր գրքերում գրանցված ակտերը ծննդյան, մահվան, ամուսնութեան մասին և այլն, պետք է իսկապես համապատասխանեն տեղի ունեցած ծննդյան, մահվան, ամուսնութեան և այլ փաստերին: Այդ պատճառով ակտերի գրքում ծնողների փոխարեն վորդեգրողներին գրանցելը, կնշանակի քաղաքացիական կացութեան ակտերի գրքի մեջ բացահայտ վոչ նիշտ տեղեկութիւն-

ներ գրանցել, վորն անպայման անբույատրելի յե: Վորդեգրվածի համար ծննդյան վկայական դուրս գրել առանց ակտերի գրքերում համապատասխան գրանցումներ կատարելու, նույնպես անհնար է, քանի վոր ԶԱԳՍ-երի կողմից տրվող փաստաթղթերը հանդիսանում են ակտերի գրքերի ֆաղվածքներ, այդ պատճառով այդպիսի կարող են տրվել միայն գրքում յեղած գրանցումների հիման վրա և իսկուրյամբ համապատասխանեն այդ գրանցումներին:

2. **ՌԵՅՍՆԱԿ** ամուսնության, ընտանիքի և խնամակալության որոշումների 60-րդ հոդվածի համաձայն վորդեգրության ժամանակ, վորդեգրվողին կարող է տրվել վորդեգրողի ազգանունը, նույնպես և վորդեգրվողի համաձայնության դեպքում նաև վորդեգրողի հայրանունը:

Որոշումների այս հոդվածից յերևում է, վոր վորդեգրողներին լիովին հավասարեցնել ծնողներին անհնար է, առանց վորդեգրվող յերեխաների զիտության, այդ պատճառով վորդեգրողների ցանկությունը վորդեգրված յերեխաներից թազցնելու այն, վոր նրանք իրենց հարողատ յերեխաները չեն, անիրազործելի յե, քանի վոր վորդեգրողների հայրանունը նրանց տալ կարելի յե, յերբ նրանք կմեծանան և հետևապես արդեն կլիմանան, որ վորդեգրողները նրանց ծնողները չեն. Հիշվածից յերևում է, վոր չկա որինական վոչ մի հիմք վորդեգրողներին դարձնել ծնողներ ըստ ծաղղմի և այդ պատճառով նման զիմումները ԶԱԳՍեր-ի կողմից պետք է մերժվեն:

8. **ՀԱՐՑ**.— Ի՞նչպես է լրացվում մահվան ակտի 9-րդ սյունակը (աշխատանքի վայրը և պաշտոնը), յեթե գրանցվում է «տղևային տնտեսուհու» մահը, վորը սակայն վորևե մեկի խնամքի տակ գտնվելիս չի յեղել, այլ ապրել է յուր տնտեսության յեկամուտով (կով, բանջարանոց և այլն):

ՊԵՏԱՍԽԱՆ.— ԽՍՀՄ ՆԳԺԿ երասանգի 17-րդ հոդվածի «բ» կետի համաձայն պենսիոներների, քոչակառուների և տնային տնտեսուհիների նկատմամբ «աշխատանքի վայրը» կետում գիծ է ֆաղվում: Բայց այնտեղ 17-րդ հոդվածում խոսքը վերաբերվում է այն տնային տնտեսուհիներին, վորոնք գտնվում են վորևե մեկի խնամքի տակ (ամուսինը բանվոր է կամ ծառայող, իսկ կինը վարում է տնտեսությունը):

Այս դեպքում մեր խոսքը նման «տնային տնտեսուհուն» չի վերաբերում: Տվյալ դեպքում գրանցվում է ամուսնու (յերեխաների) խնամքի տակ չգտնվող վոչ մի տեղ չաշխատող տնային տնտեսուհու մահը, վորը ապրել է բանջարանոցի մշակումից, յուր կովի կաթը վաճառելուց և այլ միջոցներից ստացված յեկամուտով: Ըստ էության նրան տնային տնտեսուհի անվանելը կլինի վոչ բոլորովին ճիշտ: Այդ պատճառով մահվան ակտի 9-րդ սյունակը լրացնելու ժամանակ նման դեպքերում պետք է գրել «աշխատանքի բնույթը» — ռժանդակ գյուղակիսի տնտեսություն, իսկ «աշխատանքի վայրը» — յուր տղևտեսության մեջ:

9. **ՀԱՐՑ**.— Ամուսնության ժամանակ ամուսինները վորոշում են մնալ իրենց մինչամուսնական ազգանուններով: Բայց մեկ կամ յերկու տարի հետո կինը վորևե պատճառով ցանկանում է ընդունել ամուսնու ազգանունը: Ի՞նչպես վարվել նման դեպքերում:

ՊԵՏԱՍԽԱՆ.— ԽՍՀՄ ՆԳԺԿ-ի ԶԱԳՍ-ի վերաբերյալ երասանգի 62-րդ հոդվածի համաձայն ամուսնացողներին իրավունք է վերապահվում ընդունել մեկ ընդհանուր՝ մարդու կամ կնոջ ազգանունը, կամ քե մնալ մինչ ամուսնական ազգանուններով: Այդ պետք է հասկանալ հետևյալ կերպ՝ ամուսնացողներին յուր ազգանունը յերկրորդ ամուսնու ազգանվան փոխելու իրավունք է տրվում միայն այդ ամուսնությունը գրանցելու ժամանակ:

Յեթե ամուսնությունը գրանցելու ժամանակ ասեցի կինը վորոշել է մնալ մինչամուսնական ազգանունով, այսինքն չի ցանկացել յուր ազգանունը ամուսնու ազգանունով փոխելու իրավունքն ռոտագործել, նա այդպիսով այդ իրավունքը կորցրել է: Յեթե նա այնուամենայնիվ ցանկանում է փոխել իր ազգանունը, այդ կարելի յե անել միայն ազգանունը փոխելու ընդհանուր կարգով, այսինքն քերթում հայտարարություն տալով, ազգանունը փոխելու համար պետիաստորբ վնարելով:



[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]

Գալիլեոյ լիպից Ե 2207. Գաւթեր N 239.
Տիրաժ 180

Գեաւրատի I տպարան, Յերևան, Լենինի 65



ՀՀ Ազգային գրադարան



NL0987282

9 APR 1989

841

11

28707

p-84